

Մեծ-Նաղին ամրացած բարձրութիւնը մեր զօրքերը կուով վեր առան: Բարձրութեան վրա եղած թիւրքաց բառալիւծը գրեթէ աւ- բողջութեամբ ոչնչացրած է: Ճակատամարտը շարունակեց ամբողջ օր Մուխտար-Փաշայի բոլոր յոգիերի և Նարսի գարնիզօնի գէմ: Թշնամու կորուստները շատ նշանաւոր են: Մեր կորուստները զեռ յայտնի չեն: Մեր ձեռքը գերի ընկան 160 թիւրք սօղատներ և 8 օֆիցէրներ: Շատ թիւրքեր սպանված են: Թշնամին կատաղութեամբ էր կուռում, բայց մեր զօրքերը առաջ էին գնում դան- զաղ, բայց անընդհատ և հաստատ կերպով, չը նայելով որ երկիրը շատ սարօտ և անստիկ ամրացած է: Գիշերը վերջ դրեց ճակատա- մարտին: Մեր զօրքերը գիշերեցին իրանց վեր առած ամրացած դիրքերի վրա: Դուռնայի զօրքից հեռագրում են պաշտօնապէս Վի- ջաղային ընկերութեան միջոցով, որ գնեւ- լալ Մանէի զօրքը ջարդեց սեպտեմբերի 14-ին Չիքախ-Աուլիսի մօտ 500 հոգուց բաղկացած Չիքիզլեքի մի խումբ, իսկ 15-ին նոյն ամսի յետ միջոց 700 չիքիզլեքի Քա- թար-Բաղարջի մօտ Սեպտեմբերի 16-ին զարձակ ջարդեց 300 չիքիզլեքի, և վե- ռադարձաւ իր առաջվայ տղը: Մեր կողմից սպանված են 29 մարդ, վերաւորված են 1 օֆիցէր և 2 սօլդատ: Թշնամու կորուստները մեծ են: Բաղարջի ամրացած է և բռնված է թիւրք և եղբայական զօրքերով: Պէշ-վ- նայից պաշտօնապէս հեռագրում է Գլխա- ւոր Հրամանատարը որ այցելելով բոլոր ռու- սաց և ռուսական ամրացած առաջաւոր դիրքերը, իշխան Կարլ և գեներալ Տօմէրիկի հետ միասին, գտաւ այդ դիրքերի աշխատու- թիւնները շատ առաջացած: Թիւրքերը չեն պատասխանում ռուս հրահրութեան վրա: Այլ տեղերում ամեն բան հանգիստ է:

ՆԱՄԱԿ ԲԱՆՈՒԻՑ

Անպտեմբերի 12-ին

Այստեղ մի բարեպաշտ հայ արուեստագործ կայ Ա. Թ. անունով, որի վարքը շատ հետաքրքրա-

ցան աղքատը սկսում է մտածել իր տան պի- տոյքների համար փայտ առնելու: Նա առնում է ուրեմն թանգ գնով մի մի սայլ, կէս սայլ, քանոթը սայլ մինչև անգամ, իսկ հարուստը գինեց ձմեռվայ համար իրան հարկաւոր վառելու փայտը երբ նա շատ է ծան էր, ուրեմն նրան փայտը անհամեմատ աւելի է ծան է նստում, քան թէ աղքատին...

Եւ ամեն բան այսպէս: Հարուստի համար ամեն բան է ծան է նստում, աղքատի համար ամեն բան թանգ:

Այժմ նայենք թէ հասարակութեան բարոյա- կան և մտաւոր կենսական վերաբերեալ ծախսերի մէջ որ չափով է մասնակցում հարուստը և որ չափով աղքատը: Թէ հարուստի և թէ աղքատի երեխաների համար ամեն ուսումնարաններ մէջ ուսում առնելը մի և նոյնն արժէ: Ուրեմն աղ- քատի համար երեխաներին ուսում տալը աւելի թանգ է նստում, քան թէ հարուստին: Աղ- քատի տարեկան քսան և հինգ բուրդը գուցէ հազար անգամ աւելի թանգ է քան թէ հա- րուստի քսան և հինգ բուրդը: Աղքատը անհա- մեմատ աւելի շատ է ծախսում ուսումնարանի, ընթերցանութեան գրականութեան և լրագրու- թեան վրա, քան թէ հարուստը:

Այս օրերս ես հետաքրքրվեցայ իմանալ ու- ղեր են մեր հասարակութեան մէջ մեր լրագրի, ուրեմն և իմ ֆէլիտօնների կարգացողների մեծ մասը, իմ հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար խնդրեցի խմբագրական մատենանը որի մէջ գրված են «Մշակի» բոլոր բաժանորդ- ների անունները: Ուշադրութեամբ ամբողջ մա- տենանը հետազօտելուց յետոյ, համոզվեցայ որ ամեն քաղաքներում «Մշակի» բաժանորդների մեծ մասը պատկանում են միջին դասին՝ քա- հանաներ, փոքրիկ վաճառականներ, գիւղական տանուտէրեր, փոքրիկ աստիճանաւորներ, վե-

կան է: Սա իր քրտնալից աշխատութիւնով պա- հում է իր ընտանիքը: հեռու է ամեն տեսակ կուխներից: համարուեստների կամ այլոց մէջ վէճ և անհամաձայնութիւն ծագելիս միշտ մէջ է ընկնում և խաղաղութեամբ վերջացնում, չը թո- դելով քաղաքական դատաստանի դիմելու: ա- մուսները մէջ ծագած խռովութիւններ և բաժա- նումներ համոզում է և յորդորական խօսքերով խաղաղացնում է նա և միաւորում կրկին: Իրեն խորհրդապահ մարդու շատերը սորան են հա- ւատում իրանց զաղտիւրք և երբեք չեն զղջում: զրազէտ է և աւետարան շատ է սիրում: մի խօս- քով կրօնասէր մարդ է, շերտեւանդ քրիստո- նեայ: Նա մեծ ուշադրութեամբ հետեւում է պա- տերապիկ ընթացքին, հեռագրական և լրագրա- կան լուրեր հետաքրքրութեամբ լսում է ուրիշ- ներից և տպաւորում մտքում: Քրիստոնեաների գէմ Թիւրքիայում գործված բարբարոսութիւն- ների համար ամեն օր խորխորվում է նորա սիրտը: Նա շատ ցաւում է, որ ինքը ուսումնա- կան և լեզուագէտ չէ, որպէս զի կարողանար իր զգացմունքները յայտնել Ներսիսյան: Արդէն եր- կու ամիս է, որ այս բարի մարդը խնդրում է ինձ գնէ իր մի քանի խօսքերը գրել և որ և իցէ լրագրի ուղարկել: Ես այլ ես չը կարողանալով ընդգրկմանով և վերաւորել նորա զգացմունքը՝ այժմ ստիպված եմ կատարել նորա ցանկա- թիւնը: Եւ անհ նորա խօսքերը:

«Ո՛վ քրիստոնեայ եւրօպայէր, ես մի խեղճ արուեստագործ եմ, ուսում չունեմ, որ կարողա- նամ ձեզ հետ խօսել: սկզբից մինչև այժմ ես Աւետարանն եմ սիրում և կարգում, իմ գիտու- թիւնը միայն այս է: Ես ձեր երկիրը չը տեսած, ձեր լեզուն չիմացած, բայց էլի շատ եմ սիրել ձեզ: որովհետեւ շատ պատմութիւններ եմ լսած ձեր լուսաւորութեան, եղբայրսիրութեան և ճշը- մարիտ քրիստոնէութեան համար: Ասում են որ դուք անպիկն գումարներ էք վատում, դպրոց- ներ պահում, քարոզչներ պատրաստում, ամեն լեզուներով սուրբ գրքեր թարգմանում և ձրի բաժանում, որ բոլոր աշխարհը լուսաւորէք, վա- ղենիներին և կուսպաշտներին անգամ բարի մար- դիկ ու բարի քրիստոնեաներ չինէք: առաջ այս բոլորը երբ կը լսէի՝ խելքս կը գնար, ուրախու- թեանս չափ չէր լինի: Բայց այժմ, երբ քրիս- տոնեաները Տաճկաստանում անողորմ կերպով տանջվում, կոտորվում և ոչնչանում են, դուք, ասում են, ոչ միայն չէք պաշտպանում նորանց, այլ և օգնում էք բարբարոս թիւրքին թէ խել- քով, թէ գէնքով և թէ փողով: Երբ սկսում եմ հաւատալ այս լուրերին՝ սարսափ եմ գալիս վե-

նոտրական ոչ բարձր աստիճանաւորներ, ուսու- նողներ, գիմնազիստներ, տարրական ծխական դպրոցների տեսուչներ և վարժապետներ, ախ- րացուհներ, միջին դասին պատկանող կանայք և օրիորդներ, վարժուհիներ, ուսուցչուհիներ, վե- ջապէս միջին դասի մարդիկ կամ բոլոր վերե յիշ- ված միջին դասին պատկանող մարդիկների կա- նայք: Եթէ ընդունենք որ «Մշակը» ընդամենը ունի ամենաշատ 700 բաժանորդ (չենք խօսում կարդացողների վրա) բաժանորդների ցուցակը մեծ ուշադրութեամբ կարդալուց յետոյ, կը գտնենք այդ եօթ հարկերի մէջ շատ շատ 15 ճշմարիտ հարուստ մարդիկ: Ուրեմն իւրաքան- չիւր 100 բաժանորդի վրա գալիս է 2 հարուստ մարդ: Ընթերցողների մէջ, և այն էլ հայերէն ա զ զ Եւրոպի թիւրքի հարուստները 200 միայն: անհ սարսափելի, դառն, յուսահատական ճշը- մարտութիւն: անհ մեր հարուստների գէպի ազգային գործը, գէպի ազգի մտաւոր կենսքը սարսափելի, սպանիչ, մեռցնող անտարբերու- թեան ապացոյց:

Եւ անհ այդ անտարբերութեան հնորնով ինչ զրուցեմք մէջն է մեր լրագրութիւնը:

Եւ դեռ կան թէ և գնիւ, բայց շատ միամիտ անձինք մեր բաժանորդներից, որոնք գիտում են մեզ աղաւելով որ եկող տարին աշխատենք «Մշակը» ամեն օր հրատարակել... Ասացէք, պարոններ, ինչ փողերով հրատարակենք:

Հայը ամեն բանի մէջ կամենում է աւանել նիւթական օգուտ, չա՛հ, ամեն բանից նիւթա- կան, չոյսփելի կերպով անմիջապէս չա՛մվել:

Հայը իր մայրենի լեզուն էլ արհամարհում է, որովհետեւ նրա մէջ չէ տեսնում նիւթապէս չա՛մվելու միջոց, հայը իր երեխաներին ուսում- նարան էլ չէր տալիս, նոր սերունդի համար ուսումն էլ աւելորդ բան էր համարում, մինչև որ չը համոզվեցաւ թէ ուսում առածը աւելի փող կարող է աշխատել կենսքի մէջ:

բաս: Գուք հոգում և աշխատում էք վայրենի- ներին անգամ հաւատի բերել, ուրեմն աւետա- րանի սէրը կատարեալ է ձեր մէջ: հաւատում եմ: Բայց եթէ իսկապէս այդպէս է՝ ինչու ապա բաղ- մաշարաբ քրիստոնեայ հայ ազգին չէք պաշտ- պանում, ինչու Հայաստանի եկեղեցիները քանդ- վում, սրբութիւնը պղծվում, անմեղ մանուկների և կանանց պատիւը օտնակոխվում և արեւները թափվում են: ամբողջ մի ազգ Աւետարանը ձեռ- քին նահատակվում է ձեր աչքի առաջին, դուք տեսնում էք բոլորը և չէք խօսում: Միթէ աւելի հաճելի չի լինի Աստուծուն, որ ձեր չարաշրթոյ եղբայրներին ազատէք տաճիկ լուծից, քան թէ ծովերում և ցամաքներում մեծամեծ նեղութիւն- ներ կրեի՞մ նոր երկիրներ և նոր ազգեր որոնէք լուսաւորելու: Գուցէ կարծում էք, թէ խեղճ հա- յերը երկաթի մարմիններ և անզգայ սրտեր ու- նեն, որ այնքան սարսափելի անպատուութիւն- ներ և տանջանքներ հեշտութեամբ տանեն: գուցէ կարծում էք թէ հայերը մարդիկ չեն և իրաւունք չունեն մարդավարի ապրելու: ոչ, ոչ, սխալվում էք, եթէ այդպէս էք կարծում, մենք ես մարմին և հոգու ցաւերը զգում ենք, պատելի և ազատութեան գինը հասկանում ենք: մենք ես Աւետարանի և հանդերձեալ կենսքի յոյս ունենք, ձեզ պէս քրիստոնեայ մարդիկ ենք, ձեր եղբայրներ ենք: ձեր և մեր մէջ զանազա- նութիւնը միայն բաղձն է, որից մենք զօրի ենք: Ամեն օր մահմետականները ինձ ասում են: «Ինչ ես կարծում, Ղուրանի որդիքը անյայդթիւ են, նորա ամեն տեղ միաբան և միահոգի են, մի եղ- բայրութիւն են կազմում: մարդաբէի դրօշակը կարող է բոլորին ստի կանգնեցնել, և այն ժա- մանակ ոչ ոք կարող չէ նորա զօրութեանը դի- մանալ: Ի՞նչ կարող են անել Աւետարանի որ- դիքը, նոյն մէջ միաբանութիւն և եղբայրու- թեւորութիւն չը կայ, միշտ թշնամի են միմեանց»: Ողորմած Աստուած, միթէ իսկապէս Աւետարանը պիտի յաղթի Ղուրանից, միթէ քրիստոնեայ- ները միաբանութեամբ և եղբայրութեամբ աւելի բարձր չեն քան մահմետականները: միթէ մեր հայ եղբայրները և ուրիշ քրիստոնեաները այսօրեւեակ ես ստոյնի կը մնան թիւրքերի ձեռ- քին... այս մտքերը անելիս՝ հազիւ թէ հաւատը և յոյսը չեն խախտվում իմ մէջ: Բայց մեր յոյսը դարձեալ ձեր վերա է, ով լուսաւորեալ եւրօ- պացիք, ով աւետարանական ազգիք: ձեզ աղա- չում ենք, որ այս բանում միաբանվիք մեր Ողոր- մած Թագաւորի հետ և ազատէք խեղճ քրիս- տոնեաներին, որոնք ձեր եղբայրներ են մի և նոյն հոգուց ծնված: Հայ ազգը դեռ ես այնքան

Ուրեմն ինչ միջոցով կարող էք հային ստի- պել լրագրին գրել, երբ լրագրը ոչինչ անմի- ջական չա՛հ չէ խոստանում:

Եւ քիչ բաժանորդներ ունենալով, երբեք չենք հասնի այն բանին, որ մեր լրագրը ամեն օր հրատարակենք:

Երեկ երկիւղեան խմբագիրը կանչել է տալիս ինձ իր աւանձնատեսակը: Ես գալիս եմ և գտնում եմ նրան այն օրվայ ստացած նամակ- ների ընթերցանութեամբ զբաղված: — Տեսէք, ասեց նա ինձ, հէնց որ ես մտայ սենեակը, կարդացէք այս նամակները: Ամեն կողմից խնդ- րում են մեզ, որ եկող տարին «Մշակը» չա- բաթը գնէ չորս կամ հինգ անգամ հրատարա- կենք: Ի՞նչ էք կարծում, կարող ենք:

— Ո՛չ, դա անհնարին բան է, ով կը տայ մեզ միջոցներ:

— Այ՛, ես էլ կարծում եմ թէ անհնարին է: Բայց գիտէք ինչ... վեր առէք այդ նամակ- ները, ուշադրութեամբ կարդացէք և լաւ մտա- ծեցէք... Գուցէ մի նաք կը գտնէք...

— Կը կատարեմ ձեր խնդիրը, պարոն խմբա- գիր, պատասխանեցի ես, բայց կարծեմ որ իմ բոլոր մտածմունքներս այդ մասին ապագային կը լինեն:

Ամբողջ գիշերը, անկողնիս մէջ պառկած, մը- տածմունքներով մէջ ընկղմված, ես չը կարո- ղացայ քնել: Յանկարճ գիշերվայ մէջ տեղ ես ուրախութեանց վեր թռայ անկողնիցս... մի հա- նարեղ միտք ծնվեցաւ գլխումս...

Գեռ գրեթէ չը լուսացած, ես վաղեղի իրմ- բազրի մօտ:

— Գտայ, գտայ, պ. խմբագիր, աղաղակում էի ես ուրախացած:

— Ի՞նչ գտաք, հարցրեց նա ինձ զարմացած, երբեք մտածալով անցեալ օրվայ ինձ տուած յանձնարարութեան մասին:

ազնութիւն ունի, որ կարող է ձեր անեղութե- րեւարութիւնը գնահատել և յաւիտեան երախ- տագէտ լինել»:

Ահա սորանից կարելի է մի գաղափար կազ- մել, թէ ինչ սիրտ և հոգի ունեն իսկական հայ արուեստագործները, որոնց մէջ սա բացառու- թիւն չէ: այս գրածներս նորա սեփական մրտ- քերը և խօսքերն են, որոնք ինքը նստել է առեւ և ես գրել եմ նորա ներկայութեամբ: Այս բարի մարդը շատ ցանկանում է, որ իր խօսքերը տեղ հասնեն, լսելի լինեն, և ես բոլորովին հաւա- տացրել եմ նորան այս մասին, յոյս ունենալով մեր և օտարազգի լրագրութեան վերա:

Յ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Անպտեմբերի 15-ին

Թէ որքան օգտաւոր է մի զգուշարար նա- խառնութիւնը կամ մի անկեղծ խոստովանու- թիւնը, որ լոյս է տեսնում պարբերական թիւթի մէջ,—սորա մասին կարիք չը կայ վկայելու, քանի որ սա մի շատ հիմնաւոր նիւտ է: Սորա հա- կառակ եւ կամենում եմ նկատել տալ, թէ նոյն- քան վտանգաւոր և վնասաբեր է մի չնոյզ գովա- սանութիւն, մի չեղած և իսկականացած բան, վերջապէս մի զբախտութիւն, որ երբեմն այս կամ այն քուրմի գլուխը եղելու մտքով, հրա- տարակով և լրագրում:—Ահա, թէ ինչու ամեն մի նամակագիր, որ ցանկանում էր թէ իր գրածը արգիւնք տար հասարակութեանը, պէտք է աշ- խատէր անաչառ իսկութիւններ հաղորդել: Մեր հասարակական գործերը, թող ասենք, բախտի բերմամբ այնպիսի կրտսիական գրութեան մէջ են, որ բաւական է մի չնչին յուսահատութիւն — և անհ ամեն բան ոչնչացած է... Մի քանի պա- րտններ երբեմն լոյս են գալիս, զրգված իրանց բարի զգացմունքից թէ պատիւ անունից, այս ինչ կամ այն ինչ հասարակական ցաւ բուժե- լու, վերանորոգում են մի ընկած ուսումնարան, հիմք են դնում թատրօնի և լրագրութեան և, մինչ այս—մինչ այն, մէկ էլ տեսնես զանազան կողմից մի քանի պարտններ յօնքը ուղղելու տեղ, աչքն են հանում և մեռցնելով վանք ու եռանդ, շատերի չինումը քանդում է մինը... Օրինակը բերելու ես հեռու չեմ գնում: անհ այդպիսի չո- հող յօդաւածագիրներից մինի նամակը, որ արպ- ված էր «Մշակի» 65 համարում:

—Մի ամբողջ ծրագիր եմ բերում ձեզ, թէ ինչպէս պէտք է անել որ հայերը «Մշակին» շատ գրվեն, պատասխանեցի ես, և սկսեցի շտապով բացատրել նրան իմ հանձնարեղ պը- րօթկտը: Լսեցէք:

Հայը առանց փողի առանց գնէ ամենաան- նշան շահը տեսնելու, ոչինչ չէ անում, ոչինչ բանին չէ համակրում: Այդ պատճառով էլ նա պէտք է նիւթական չա՛հ տեսնէ «Մշակի» բա- ժանորդ գրվելով: Իսկ այդ իրագործները շատ հեշտ է:

Հարկաւոր է իւրաքանչիւր տարվայ վերջը մեր բաժանորդներին պրէմիաներ (վարձ) նշանակել: Այդ պրէմիաները առաջին տարի- ները կը լինեն զեռ շատ անմեծ, բայց պէտք է անպատճառ լինեն նաղդ փող: Առաջին պրէ- միա դիցուեք կը լինի 300 բուրդ, երկրորդը 200 բուրդ և երրորդը 100 բուրդ: Իւրաքանչիւր բա- ժանորդ որ ամբողջ տարով է գրվել, կը ստա- նայ մի ստացական որի վրա կը լինի ի հարկէ մի համար: Այդ համարները ինչպէս միշտ կը նշանակվեն խմբագրական մատենան մէջ, բայց տարվայ վերջը այդ բոլոր համարներից մինը կը տանէ վիճակով առաջին պրէմիա, մի ուրիշ եր- կրորդ պրէմիա, մի երրորդ պրէմիա պրէմիա:

Այսպիսով իւրաքանչիւր բաժանորդ որ 7 բուրդ մի անգամից է վճարել, կամ որ կէս տարով գրվելով, տարվայ մէջ երկու անգամ չորս բուրդ է վճարել,—իրաւունք կունենայ տանել 300, 200 կամ 100 բուրդ: գումարը: Ժամանակով երբ լրագրը կը հարստանայ, կարելի է աւելի մեծ պրէմիաներ նշանակել:

Կը տեսնէք պ. խմբագիր, որ եթէ այդ իմ պրօթկտը կընդունէք, եկող տարին արդէն մի քանի հազար բաժանորդ կունենաք:

Ո՛ւնց է, ունց... խեղճ մարդ եմ թէ չէ... կատր Սէրգէյ Տարսալը:

Ասիպի:

Գ. Տ. Գ. — յայտնելուց յետոյ իրական սեռի անմիջական գրութիւնը Շուշում մինչև 1876 թ., նա ընթերցողին ներկայացնում է Շուշում մէջ օրիորդական երկու դպրոց: Նա առօք-փառօք նկարագրում է օրիորդների աստիճանագործութիւնը, 25 կօպէկանոց վիճակարկութիւնը: Նա յիշատակում է նաև հարցաքննութիւնների մասին, Արիստակէս վարդապետի նախագահելը — մի խօսքով — ըստ մանրամասնութիւնք, բայց թէ պատից պատ ընկնելով, որպէս զի յօգուածը ծառայի իր նպատակին, նա երկնում է միանգամից այս ամենի սկզբնապատճառը և առաջադրութեանց փառքը վերաբերել Աղապարեանին:

Այստեղ ահա, առ այժմ զսպելով ինձ բանալ յօդուածի թակարդաւոր կողմերը և թոյլ չը տալով մինչև անգամ ուղղակի առեւտր թէ ով է այդ բարեկարգութեանց սկիզբը և թէ Արիստակէս վարդապետը ոչինչ չէ արել, ես, յօդուածագիրն մի համառօտ դաս տալուց յետոյ, Շուշում հայ հասարակական կեանքի մասին անծանօթ ընթերցողներին գաղափար տալու և նոյն իսկ մեր հասարակութեան առաջ իր կարևոր գաղափարները բանալու համար դնում եմ հետևեալ ծանրակշիռ հարցերը, որոնց համար պատասխան եմ պահանջում, ինչպէս կասեն մեզանում, անթեղած կրակը քանդել սիրող պ. յօդուածագիրը:

1. Եթայն 1876 թ. փետր. 28-ից Շուշում գտնվող տեսուչ պ. Վ. Պապլանյանին դործունէութիւնը և ճշմարիտ չէ, որ օրիորդական դպրոցը մինչև նորա գալը եղել է անմիջական գրութեան մէջ, մեծ, խոնարհ, չըջապատած աննկարագրելի կեղտոտութեամբ:

2. Ընդ ամենը 14 աշակերտուհի ունեցող այդ դպրոցի վարժուհին բերանը կալած, ասիական կեղտոտ չորերով չէր, որ մի նահանգապետ ներս մտածին պէս պարկէլ էր սեղանի տակ, իսկ քաշաւոր ուսուցիչները ինչ գիտութեան տէր էին:

3. Երբ և իցէ յաճախէ և Արիստակէս վարդապետը օրիորդական դպրոցը և կարող էր ցոյց տալ նորա արած մի կարգադրութիւն. նա հոգացել է և վիճակարկութեանց գոյացել է 150 թէ մի քանի հարիւր մանէթներ, Ո՞վ էր գանձապահ. ո՞ր էն — ո՞ւմ մօտ էն այդ փողերը:

4. Օրիորդական դպրոցը ունէր իշխանութեան տակ է, Գոնէ հոգաբարձուք գիտեն այդ փողերի տեղը: Ո՞ր էն օրիորդական դպրոցի խալիները, խալիները և աւելորդ մնացած աստիճանագործութիւնը:

Ի՞նչ օրում էր ուսումնարանը հարցաքննութեանց առաջ և ինչ դրութեան մէջ է նա այժմ: Տեղեկութիւն ունի՞ր դուք կամ վարդապետը սորա մասին:

Ես կարծում եմ մի առ մի պատասխան կը ստանամ այս մասին եթէ ոչ կեղծված նամակագիրից, գոնէ պարզ կը զգայ պ. Վ. Պապլանյանեան ինքը պատասխանելու, որով երևան էն զալու մեր խեղճ հասարակութեանց գաղափար մնացած շատ ու շատ հարցասիրելի բաներ, որոնց համար սպասում ենք անհամբեր:

Ս. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՑ պ. Գ. Պապլանյան խնդրում է մեզ յայտնել հետևեալը «Հռիփսիմեան հայոց օր. դպրոցի գրադարանը ընթերցանելի գրքերի մեծ կարօտութիւն ունենալով, ինչպէս ենք պ. Վ. լրագրագետներից ու հեղինակներից չը խնայել նուրբերու իրանց վատակի մի օրինակը, որով նպատած կը լինէին մայրենի լեզուի ճաշակը պատվաստել նոր խնայող մեր իրական սեռին, Հասցէն, Шуша, Инспектору Васаку Паладжанянц.»

ԲԱՐՈՒՅՑ գրում են, Վենք ունենք Բարեգործական Ընկերութիւն թէ բնիկ և թէ օտարական հայ աղքատներին օգնելու համար, բայց Պարսկաստանից գալին են շատ հայեր աղքատ ձեռնարկով, ձեռներին սուտ վկայականներ, որոնք ձեռք են բերում թէյրանի քահանաներից: Լըսում ենք, որ ինչալ քահանայք այդպիսի վկայականները վաճառում են: Մեզ պատմեցին թէ քահանաներից մէկը մի գիւղացու հետ պայման ունէր կապած, որին տուել էր փառաւոր և ցաւալի վկայական: Սորան ապացոյց կարող է լինել այս, որ ինքն վկայական ստացողը մի օր պատմեց թէ Ռաշտից երկու նուագում 30 թուման պարսից փող է ուղարկել յիշեալ քահանայի աշնունով: Այս տեսակ մարդիկ շատ անգամ ներկայումս են մեզ: Ուստի խնդրում ենք հոգեւոր

իշխանութեան ուշադրութիւնը, որ արգելի այսպիսի կեղծ վկայականների տալը:»

ԹԻՖԼԻՍՈՒՄ հիմնված հայ-գաղթականներին օգնելու համար հոգաւոր Մասնաժողովը ստացել է Աստարականից 1447 թուրք յօդուածագրութեան Մասնաժողովը խնդրել է մեզ տալ նուիրատուների անունները, բայց մենք ներկայ համարում տեղ չունենալով չենք տալու, այլ կը տպենք հետևեալ համարում:

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ ԹԻՖԼԻՍԻ նահանգական վարչութեան մէջ ծառայող պ. Կոզմանով, որ մեղադրվում է իր կնոջ թշուառութեամբ մասին, որ և մեռաւ արդէն այս օրերս անասելի տանջանքների մէջ, սեպտեմբերի 21-ին արձակել է իր զօրքերը իր աղջկայ վրա: Դժբաղդապէս գնդակը դրակ է թշուառ օրիորդին: Վէրքի հետևանքը դեռ յայտնի չէ: Մենք ուրիշ կերպ չենք կարող բացատրել այդ տեսակ ալլաղակութիւն, եթէ ոչ խելագարութեամբ:

Ստացանք պ. Մէլքե-Աղաբեանի ձեռքով Պարսկաստանի Արդաբիլ քաղաքի հայերից 190 թուրք գումարը յօդուած Աղաբեանից գաղթած Թիւրքիայի հայերի: Նուիրատուների ցուցակը կը տպենք «Մշակի» հետևեալ համարում:

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 15-ից, որ ամսին 8-ին արդէն ձիւն եկաւ այնտեղ և Վերմալափը ցոյց էր տալիս մինչև 8 աստիճան: Գիշերները ցուրտը սաստկանում է:

Մեզ գրում են ՄՕՍԿՎԱՅԻՑ: «Տեղին համալսարանի հայ ուսանողները, ինչպէս իսկ ենք գիտաւորութիւն ունեն տալ յօդուած 3000 գաղթական հայ ընտանիքների մի ներկայացում, որի պատասխանութեան համար այժմ աշխատում են:»

Ինչպէս ընթերցողը կը կարդայ ներկայ համարի առաջնորդող յօդուածում ժողովրդական տօնի համար թիֆլիսցիները բաւական շատ նուիրատուութիւնները արել են: Բայց այնուամենայնիւ ցանկալի է բուֆետի համար դարձեալ նուիրատուութիւններ՝ գինի, միդդ, արաղ, գարնջուր և այլն:

Առիթ ունեցանք այս օրերս այցելել Հաւաքարի մէջ գտնվող ժամանակաւոր գիտաւորական հիւանդանոցները: Վրանները որոնց մէջ գտնվում են հիւանդ գիտաւորականները բաւական լաւ են չինված, և ներսից պաշտպանված են հաստ մահուղով: Մենք հետաքրքրվեցինք տեսնել հիւանդների կերակուրները և խմիչքը և պէտք է խոստովանենք, որ լաւ են կերակուրում: Հաւաքարում գտնվում են (Եան-Սաղ անուանով տեղում) այդ տեսակ երեք ժամանակաւոր գիտաւորական հիւանդանոցներ:

Ռուսաց «Голосъ» լրագրում կարդում ենք ԻԳԻՐԻՑ գրած նամակը, որի մէջ թղթակիցը պատմում է թէ Թիւրքիայից գաղթականների թիւը հասնում է մինչև 25 հազարի և սոցանից միայն հազարը գաղթել են Երևանի նահանգը, որտեղ, հաւատացնում է թղթակիցը, որ թշուառ գաղթականներին տեղացի մի քանի հայեր հասրտահարում են:

Մենք առիթ ունեցանք ծանօթանալ Մասնաժողովից ուղարկված պ. Խատիսովի նամակներին, որոնք ուղղված են դէպի Մասնաժողով: Այդ նամակների մէջ պ. Խատիսով հաւատացնում է որ Երևանի նահանգի հայոց գիւղերը մեծ հիւրասիրութիւն են ցոյց տալիս դէպի գաղթականները և տալին են նրանց ինչ որ ունեն: Մի քանի թուրք և քուրդ տեղական գիւղերն էլ նուիրում են ցորեն թշուառ գաղթականներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՐԻՔԻԱ

Թիւրքաց հասարակական կարծիքը, — եթէ ունի նա հասարակական կարծիք, — երևում է շատ վրդոված Ռուսաստանի և Եւրոպայի դէմ: Թիւրքաց լրագիրը որ անուանվում է «Ճամարտութիւն» սարսափելի խիստ կերպով է յարձակվում թէ Ռուսաստանի և թէ ամբողջ Եւրոպայի դէմ: Թիւրքաց ինքնահաւանութիւնը մի քանի աղաղակութիւններից յետոյ էլ չափ ու սահման չը գիտէ: Ահա մօտաւորապէս ինչ է ուսում յիշեալ Թիւրքաց

լրագիրը: «Քաղաքակրթված Եւրոպան համբերում էր և նպատում էր Ռուսաստանին: Բայց մենք այլ ևս ցանկութիւն չունենք լսել Եւրոպայի ձայնը, և կը շարունակենք մեր դործը մինչև որ չը խոնարհեցնենք ռուսաստաններին և Ռուսաստանը, այդ երկիրը, որ մարդկութեանը ամօթ է բերում և որ արժանի չէ կեանք ունենալ աշխարհիս երեսին: Ի՞նչ ենք շահվել մենք Եւրոպայի ննդաւոր խորհրդներից, — այն որ մենք այժմ մեր կուրսեան անդունդի ծայրին ենք գտնվում, և սպառել ենք մեր բոլոր ոյժերը: Եթէ Թիւրքիան կատարեալապէս յաղթող կը հանդիսանայ, օսմանները սպասում են իրանց փրկութիւնը ոչ թէ Աստուրիայի կամ Գերմանիայի նախագրուելութիւններից, այլ իրանց թշնամու և ամբողջ մարդկութեան թշնամու: Ռուսաստանի յաղթվելուց — Այդ տեսակ դատողութիւններին ի հարկէ կարելի է միայն արհամարհանքով և ծիծաղով պատասխանել:

ՖԻՆԱՆՍԻԱ

Փարիզը լրագիրները հաղորդում են, որ Ժիւլ Գրեյլը, Ֆրանսիական ազգային-ժողովի նախկին նախագահը, յայտնեց իր համաձայնութիւնը ընդունել Փարիզը ընտրողական IX վիճակի կանդիդատութիւնը, որի ներկայացուցիչը մինչև այժմ եղել է հանգուցեալ Թիւրք: Սպասում են Գրեյլից որ նա մի նամակ հրատարակէ լրագիրներում, որի մէջ կը յայտնէ իր այդ համաձայնութիւնը: Այդ փաստը անուղղակի կերպով կարող է ապացոյց լինել որ Գրեյլը համաձայնվում է լինել հանրապետական կուսակցութեան առաջնորդ: — Ընտրութիւնները կը կատարվեն հոկտեմբերի 2-ին: Ֆրանսիական միւնիստրութիւնը աչքի առջև ունեցող ընտրութիւնները, հրատարակեց կառավարչական իշխանութեան համար շրջաբերականներ, որոնց մէջ հաղորդում է պրօկուրորութեան և պոլիցիային զանազան հրահանգներ, թէ ինչպէս պէտք է վարվել ընտրողական ժողովներում: Մինիստրութեան կողմից տուած հրահանգները սաստիկ խիստ են: Մինիստրութիւնը հրամայում է որ եթէ ընտրողական ժողովներում ձառախօսներից միւր իր ձառի մէջ դիպչէ հանրապետութեան նախագահին, սենատին կամ մինիստրութեանը, պոլիցիան պէտք է իսկոյն փակել տայ ժողովը, իսկ պետական պրօկուրորը պէտք է դատաստանի ենթարկէ խօսողին: Վերջապէս կառավարութիւնը բոլոր միջոցներ է գործ դնում, որպէս զի ընտրողների ազատութիւնը ձեռքի, և ընտրվեն որպէս պատգամաւորներ տեղութեանը հաճելի մարդիկ, Մակ-Մահօնի կուսակցիներ: — Որովհետեւ ընտրողական վիճակների մեծ մասի մէջ կը լինեն միայն երկու տեսակ կանդիդատներ, այն է հանրապետականներ և պաշտօնական կանդիդատներ, այդ պատճառով կարծում են ընդհանրապէս որ ընտրութեան հետեանքը առհասարակ յայտնի կը լինի արդէն հոկտեմբերի 2-ին: — Ասում են որ անգլիական Բիրմինգհամ քաղաքում ստորագրութիւն է բացված ազատամիտ կուսակցութեան ձեռքով, որպէս զի հաւաքվել այն գումարը որ հարկաւոր է Գամբետայի վրա Ֆրանսիական դատարանից նշանակված տուգանքը վճարելու: — Շվեյցարիայի Բէրն քաղաքից հաղորդում են, որ կօմ Շամբօր շուտով գալու է Շվեյցարիա, որտեղ կը մնայ բաւական երկար ժամանակ: — Վերսայլ քաղաքի քաղաքացիները մի նամակ հրատարակեց, որի մէջ յայտնում է որ պատկանելով ազատամիտ հանրապետական կուսակցութեանը, նա հրաժարական է տալիս իր պաշտօնից:

ԱՆՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Վիէնայից, հոկտեմբերի 3-ից (նոր աստիճանով) հեռագրում են ուսաց «Голосъ» լրագրին որ Տրանսիլվանիայում յայտնած դաւադրութեան գործը մեծ և սպառնալի բնուորութիւն է ընդունում: Ժողովրդի և զօրքի մէջ պատահեցան մի քանի արհեստեղ կրօններ: Գործի ընթացիկը յայնպեցաւ որ 15,000 մարդ պէտք է մասնակցէին դաւադրութեան մէջ և պէտք է մանէին Բուկինիա, քանդէին երկաթուղիները և կտրէին ռուսաց զօրքի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Գայտնվում էր այդ գործի մէջ գլխաւոր մասնակցող Անգլիա է եղել Ոչ որ չէ հաւատում լրագիրներում գրված հերքումներին: Պատգամաւոր Գեյլի մի հերքում տպեց «Tagblatt» լրագրում, բայց նորա խօսքերին հասարակական կարծիքը չէ հաւատում:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագիրը խօսելով Գլադստօնի ճառի մասին, աւելացնում է որ այժմ չեզօք դրութիւնը աւելի հարկաւոր է, քան թէ որ և է ժամանակ: Լրագրի կարծիքով Անգլիան կարող էր, եթէ յայտնվէր զինադադարը, խորհուրդ տալ Թիւրքիային համաձայնվել իր հպատակներին մի քանի վերանորոգութիւններ տալու, որոնց պահանջում էր Կ. Պօլսի կօնֆերէնցիան:

— Վիէնայից հեռագրում են, որ իբր թէ Սերբիան չուտով պատերազմ պէտք է յայտնէ Թիւրքիային: Ասում են որ Իստիլ սորանից քանի մի ժամանակ առաջ պահանջել է Թիւրքիայից, որ նա հեռացնի իր զօրքերը Սերբիայի սահմաններից, բայց որովհետեւ Թիւրքիան այդ չէ կատարել, այժմ Սերբիան այդ իր պահանջի մերժումը կը համարէ պատերազմի առիթ (casus belli):

— Միջազգային Հեռագրական Ընկերութիւնը լսել է, որ եթէ Սերբիան պատերազմ կը յայտնէ Թիւրքիային, այն ժամանակ Սուլթանը կը զրկէ Միլան իշխանին զահից և նրա տեղը կը նշանակէ Կարագէօրգիեվիչին Սերբիայի իշխան:

— Վիէնայից, հոկտեմբերի 1-ից հեռագրում են «Голосъ» լրագրին որ ուսաց Թագաժառանգի գործը ջարդեց Մենիեղ-Ալի-Փաշայի գործը Ղաթալի մօտ: Թիւրքերը, ասում են, կորցրին 2000 մարդ ճակատամարտի մէջ:

— Ապացուցված է, ինչպէս հեռագրում են Վիէնայից, որ ուղարկացիներից մտադրած դաւադրութիւնը մասնէ Բուկինիա, քանդել որովհետեւ երկաթուղիները և կտրել ռուս զօրքի յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, յորդրված էր և օժանդակված էր անգլիական պարլամենտի անդամ Բէդլէրից: Ասում են որ դաւադրութեան մէջ մասնակցում էր և Միդհադ-Փաշան: Նոյնպէս կասկածում են մի ուղարկական պատգամաւորին և Կլապկային: Բայց այդ վերջինը, լրագիրներում տպված նամակով հերքում է իր մասնակցութիւնը այդ տեսակ գործի մէջ:

— Վիէնայից լրագիրների մեծ մասը վրդովված են ուղարկական դաւադրութեան պատճառով, անուանում են այդ գործը՝ անդադր, անտակտ գործ, որ հետեանք է անասն՝ կրքերի արտայայտութեան:

— Հռօմի պապը, Պիոս IX, որ այս օրերս շատ հիւանդ էր, և կարծում էին որ անպատճառ կը մեռնի, կրկին առողջացաւ: Նա պատրաստվում է շուտով մի ճառ ասել Եկեղեցական ժողովի մէջ:

— Սպանիայի Ալֆանսօ XII թագաւորը նըշանվեցաւ իշխանուհի Մարիամի հետ, որ հերցոգ Մոնպանսիէի աղջիկն է: Հարսանիքը լինելու է փետրվար ամսին: Սահմանադրութեան հիման վրա թագաւորի պսակը պէտք է կատարվի Կօրտէսների հաւանութեամբ:

— Հեռագիրը հաղորդում է որ Աստուրիայում, Տրանսիլվանիայի այլ և այլ տեղերում գտան մի ընդարձակ դաւադրութեան հետքեր: Ուղարկացիները հաւաքելով մեծ քանակութեամբ զենքեր, դիտաւորութիւն ունէին կաղնի 3000 հոգուց բաղկացած մի գունդ, որ պէտք է մտնէր Բուկինիա, քանդէր այդ երկրի երկաթուղիները, որպէս զի արգելի ռուսաց զօրքերին Ռուսաստանի հետ որ և է յարաբերութիւն ունենալ և վերջը անցնելով բուկինական սահմաններից այն կողմը, ուղարկացիները պէտք է միանային Թիւրք բաշիբազուկների հետ:

ԲԱՐՈՒՏԵՎ Ի ԿԱՆՏՐՈՆ

10—21 (1)

11-25 (1)

1-3

1-3 (U. 1)

Մի քնտանիքի մէջ թիֆլիսիւնի ընդունալով են Գիւնեթի թիւկեան երկու կամ երեք հոգի, աղլիկ թէ աղայ լեթէ հարկաւոր լինի, յանդի են առնում տակ կրկնել ապա դատեր կամ պարագիւն ՀԱՅԵՐԵՆԻՑ, ՌՈՍՏԵՐԵՆԻՑ և ԱՌԱՐ-ԿԱՆԵՐԻՑ:— Հասցէն «Մշակի» խմբագրատանը,

4—5

1-4

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԷ